Սիրելի՛ բարեկամ, եթե ուզում ես, որ մի գեղեցիկ օր անհավանական թվացող երազանքներդ իրականություն դառնան, պետք է մի կողմ նետես բոլոր տեսակի վախերն ու պատճառաբանությունները և վստահ քայլերով ընթանաս երազանքներիդ ճանապարհով: Հիշի՛ր, որ ամեն ինչ քո ձեռքերում է, և քեզնից է կախված երազանքներիդ ճանապարհի երկար կամ կարճ լինելը: Եթե ուզում ես այդ ճանապարհը արագ հաղթահարել, պետք է զինվես համբերությամբ, կրկնապատկես աշխատասիրությունդ և վստահ ու համարձակ քայլերով ընթանաս դեպի երազանքներիդ աշխարհ:

Մաղթում եմ քեզ անհոգ մանկություն, խաղաղ երկինք և պայծառ ապագա:

Հեղինակի կողմից

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ

ՀՏԴ 821.19-93 Բալասանյան
ԳՄԴ 84(5Հ)
Բ 202

Բալասանյան Հ.

Բ 202 Յուրահատուկը: Հեքիաթ/ Հ. Բալասանյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 40 էջ:

Գիրքը նվիրվում է աշխարհի բոլոր մանուկներին, ինչպես նաև նրանց, ում մեջ դեռ ապրում է մանուկը:

Գրքի՝ մուլտֆիլմ հիշեցնող նկարազարդումները նախատեսված են 3-5 տարեկան երեխաների, իսկ տեքստը՝ 5-9 տարեկան երեխաների համար:

ՀՏԴ 821.19-93 Բալասանյան

ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-75-548-9

© Հ. Բալասանյան, 2020
© Էդիթ Պրինտ, 2020

ՀԱՅԿ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՅՈՒՐԱ ԿԱՏՈՒԿԸ

Նկարիչ՝ Հայկ Բալասանյան

Օրերից մի օր աֆրիկյան սավաննա-ներից մեկում գազանների արքա Տաֆարիի և չքնաղագեղ Սալալայի նորաստեղծ ընտա-նիքում լույս աշխարհ եկավ գեղեցկուհի Կիրան: Ծնողները շատ էին սիրում իրենց



փոքրիկին և ամեն օր սովորեցնում էին վայրի բնության մեջ գոյատևելու արվեստը: Սակայն Կիրան իր ստացած գիտելիքներով չէր բավարարվում և փորձում էր ինքնուրույն հետազոտել շրջակա աշխարհը:

Օրերով նա զբոսնում էր իր հայրական տիրույթներում, ուսումնասիրում բոլոր կենդանիների վարքագծերը, իսկ երբ ճաշից հետո բոլորը քուն էին մտնում, արքայադուստրը սովորածը փորձում էր կիրառել: Շուտով նա դարձավ մրջյունների պես աշխատասեր, հովազների պես՝ ճարպիկ, ագռավների պես՝ հնարամիտ: Սակայն նրա երգանքը թռչունների պես թռչել սովորելն էր:

Արքայական ընտանիքում բոլորը Կիրային համարում էին տարօրինակ և աչք էին փակում նրա հետաքրքրությունների ու նախասիրությունների վրա: Սակայն Կիրան չէր վհատվում ցեղակիցների վերաբերմունքից և ամեն օր ուսումնասիրում ու նմանակում էր տարբեր տեսակի թռչունների՝ կատարելով տարատեսակ փորձեր:

Եվ երբ հերթական հնարքներից մեկի ժամանակ մնասեց թաթը, հայրը կանչեց նրան և խիստ տոնով ասաց.

– Կիրա՛, այսօրվանից արգելում եմ քեզ նմանակել թռչուններին:

– Լա՛վ, հայրի՛կ,– պատասխանեց Կիրան և, առանց վայրկյան կորցնելու, սկսեց իր տարագույն աչուկներով ուսումնասիրել նեկտար հավաքող վայրի մեղուներին:

Իսկ երբ հոգնեց ու հանգստանալու նպատակով չղջիկների պես ծառից թարս կախվեց, նկատեց շուրջը պտտվող մի գեղեցիկ, ոսկեթև թիթեռնիկի: